ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/100

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Արմավիր» ջրօգտագործողների ընկերություն
Մասնակից՝ «Երվադա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/3» և «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով գնանշման հարցում, «գարնանային նախապատրաստական աշխատանքների» ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ոաումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5129-2020 գրությամբ «Երվադա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) 03.04.2020թ.-ի գրության հիման վրա, 07.04.2020թ.-ին «Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 07.04.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 08.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/100 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.05.2020թ.-ին:

2. «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը 30.03.2020թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Արմավիր» ՋՕ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար գարնանային նախապատրաստական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/3» և «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով գնման ընթացակարգեր (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգերին մասնակցած «Երվադա» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Մասնակից) ներկայացրած հայտերի փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն՝ մասնավորապես ներկայացված չէր մասնակցի կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը:

«Երվադա» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Մասնակից) տրամադրվել էր 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու համար, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ մասը և 41-րդ կետը: Սակայն «Երվադա» ՍՊ ընկերությունը հատկացված ժամանակահատվածում չի ներկայացրել իր կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետը՝ Ձեզ ենք ներկայացնում Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:»:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 31.03.2020թ.-ին թիվ 01.1/26-1/479-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով գրությունը՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը սահմանում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Սակայն, «Արմավիր» Ջրօգտագործողների ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված՝ «Երվադա» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվությանը կից հիմքերը ամբողջական չեն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/3» և «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակում մասնակցին անհամապատասխանությունները շտկելու ծանուցումներն ուղարկված լինելու փաստը հավաստող ապացույցները:»:

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 01.1/26-1/4797-2020 գրության «Արմավիր» ՋՕ ընկերությունը ներկայացրել է «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/3» և «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակում ընտրված մասնակից՝ «Երվադա» ՍՊԸ-ին անհամապատասխանությունները շտկելու ծանուցումներն ուղարկված լինելու փաստը հավաստող ապացույցը:

3. <u>«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.04.2020թ.-ի գրությամբ դիմել է «Երվադա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5129-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 15.04.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երվադա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել «Արմավիր» ՋՕ ընկերության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարված երկու ընթացակարգերի՝ թիվ «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/3» և թիվ «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1 և Ընթացակարգ 2):

Ընթացակարգ 1. Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես ներկայացված չէ մասնակցի կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը, որի շրջանակներում տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար: Իսկ նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը՝ ուստի «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընթացակարգ 2. Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես ներկայացված չէ մասնակցի կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը, որի շրջանակներում տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար: Իսկ նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը՝ ուստի «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Այնուհետև, «Արմավիր» ՋՕ ընկերությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 03.04.2020թ. գրությամբ ներկայացրել է «Երվադա» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, թե՛ Ընթացակարգ 1 և թե՛ Ընթացակարգ 2-ի շրջանակներում՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես ներկայացված չէ մասնակցի կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը, որի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու համար:

Այնուհետև նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է, որ «Երվադա» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից լրացված Թերությունների ակտերի բացվածքը՝ ուստի «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժվում է:

«Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/100 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

1. Եվ այսպես, երկու ընթացակարգերի շրջանակներում 17.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ չի ներկայացրել իր կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքը:

Մինչդեռ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուսումնասիրել Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, թե արդյոք «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/3» և թիվ «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով ընթացակարգերի հրավերները հրապարակվել են մինչև գնումների պլանը հաստատվելը, թե սկզբում հրապարակվել է հրավերը, իսկ այնուհետև հաստատվել գնումների պլանը, որպիսզի պայմաններում գտնում ենք, որ ընթացակարգերը կազմակերպվել են առանց իրավական հիմքերի, որի

արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. ոիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր: Օրինակ՝ թիվ ՍՅ-ՆԳ-2020/74 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Մասնակցի, ուստի հնարավոր չէ արձանագրել Ֆ/Մ էդգար Հովակիմյանի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ոատիև գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ որոշեցի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.04.2020թ. թիվ 26/26-1/5124-2020 գրությամբ Ֆ/Ա էդգար Հովակիմյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

2. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՑ-ԼՕ-2020/100 ընթացակարգ նախաձեռնելու հիմքի առաջացել է 03.04.2020թ.(պատվիրատուի գրությունը)՝ հիմքում դնելով թիվ «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/3» և թիվ «ԱՐՄ ՋՕԸ ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից 17.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 17.02.2020թ.–ին /տես՝ թիվ 3 արձանագրությունները/, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 03.04.2020թ. /հիմքում դնելով թիվ 3 արձանագրությամբ՝ «Երվադա» ՍՊԸ –ի հայտը մերժելու մասին որոշումը/, այնինչ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 17.02.2020թ.–ին և միայն մեկուկես ամիս անց «Արմավիր» ՋՕ ընկերությունը որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՅ-ԼՕ-2019/233 և ՍՅ-ՆԳ-2019/195/: Օրինակ՝ թիվ ՍՅ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում

նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք սույն ընթացակարգի հիմքերը քննելիս՝ հաշվի առնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելու փաստական հանգամանքով պայմանավորված իմպերատիվ դրույթը՝ Պատվիրատուի կողմից չպահպանելու հանգամանքը, այսինքն 17.02.2020թ. թիվ 3 արձանագրություններով՝ <<Երվադա>> ՍՊԸ-ի հայտը մերժելուց հետո՝ սահմանված հինգ աշխատանքային օրվա խախտմամբ տվյալները ներկայացնելու հանգամանքը:

Արդյունքում «Արմավիր» ՋՕ ընկերության կողմից թույլ տված անգործության և Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթների չպահպանման արդյունքում «Երվադա» ՍՊԸ-ն հայտնվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Երվադա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-ԼՕ-2020/100 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից «գարնանային նախապատրաստական աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել են «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/3» և «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգեր (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որոնց մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Երվադա» ՍՊԸ-ն:

«ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի և «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես ներկայացված չէին վերջինիս կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետը և 41-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է «Երվադա» ՍՊԸ-ին տրամադրել մեկ աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունները շտկելու համար:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.02.2020թ.-ին անձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցում է ուղարկվել Մասնակցին:

Հանձնաժողովի 17.02.2020թ.-ի նիստերի թիվ 3 արձանագրությունների համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես ներկայացված չէր վերջինիս կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքները, ուստի Հանձնաժողովը որոշել է «Երվադա» ՍՊԸ-ին տրամադրել մեկ աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունները շտկելու համար, սակայն Մասնակիցը չի ներկայացրել իր կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքները ուստի վերջինիս կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Նույնը արձանագրվել է նաև Հանձնաժողովի 21.02.2020թ.-ին կազմված արձանագրություններով:

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 30.03.2020թ.-ին և 03.04.2020թ.-ին:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5129-2020 գրությամբ «Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից «գարնանային նախապատրաստական աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/3» և «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների 13.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի

փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես ներկայացված չէին վերջինիս կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետը և 41-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է «Երվադա» ՍՊԸ-ին տրամադրել մեկ աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունները շտկելու համար:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.02.2020թ.-ին անձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցում է ուղարկվել Մասնակցին:

Հանձնաժողովի 17.02.2020թ.-ի նիստերի թիվ 3 արձանագրությունների համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես ներկայացված չէր վերջինիս կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքները, ուստի Հանձնաժողովը որոշել է «Երվադա» ՍՊԸ-ին տրամադրել մեկ աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունները շտկելու համար, սակայն Մասնակիցը չի ներկայացրել իր կողմից լրացված թերությունների ակտերի բացվածքները ուստի վերջինիս կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Նույնը արձանագրվել է նաև Հանձնաժողովի 21.02.2020թ-ին կազմված արձանագրություններով:

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 30.03.2020թ.-ի և 03.04.2020թ.-ի գրություններով:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 17.02.2020թ.-ին՝ հիմք ընդունելով ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/3» և «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրերով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը, սակայն Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 30.03.2020թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,

ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-*

Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Անդրադառնալով Մասնակցի կողմից իր դիրքորոշմամբ արտահայտած մյուս հիմքերին ու հիմնավորումներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Պատվիրատուի կողմից Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթների խախտված լինելու պարագայում դրանք ենթակա չեն քննարկման, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գորընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5129-2020 գրությամբ «Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/100 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**